№ 265 ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29 № 265

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1909 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(37-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի։

Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և միևնոյն ժամանակ 40 կ. նամականիշ։

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով սանեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ (հին բաժանորդներից խնդրվում է ուղարկել նախկին տպագրված հասցէն)։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ»․ Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Նոյեմբերի 30-ին, կիրակի, պատարագից յետոյ, Կուկիայի ս. Աստուածածնի եկեղեցում տեղի կունենայ հոգեհանգիստ հանգուցեալ

Գէորգ Բալայեվիչ ՄԱԼԱՅԵԱՆՑԻ

մահվան քառասնօրեակի առիթով։

Որի համար յայտնում են ազգականներին և ծանօթներին հանգուցեալի մայրը՝ Թագուհին, այրին՝ Աննա Գրիգորիեվնան, Զաքարէ, Գրիգոր և Իւան եղբայրները, և որդիքը՝ Դագմարը և Ժէնիան։

Կիրակի, նոյեմբերի 30-ին, Վանքի աւագ եկեղեցում ս. պատարագից յետոյ կատարվելու է հոգեհանգիստ հանգուցեալ

ԱՆՆԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ եւ ԱՒԵՏԻՍ ԲԱԼԱՅԵԱՆ

ՂՈՒԿԱՍԵԱՆՆԵՐԻ

որի մասին յայտնվում է ազգականներին և բարեկամներին։

Պատարագի սկիզբն է $10^1/_2$ ժամին, իսկ հոգեհանգստինը 12 ժամին։

2—2

Կիրակի, նոյեմբերի 30-ին, առաւօտեան ժամը 11-ին

Թիֆլիսի Բօրսայի դահլիճում

նշանակված է

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Զբաղմունքի առարկաներն են.

1) Վարչութեան 1907/8 թատերաշրջանի հաշուի քննութիւնը և հաստատութիւնը.
2) Տիկին Մակարեանի անուան մրցանակաբաշխութեան ժիւրիի անդամների ընտրութիւնը.
3) Վարչութեան մի անդամի (Գ. Ծուրինեանի փոխարէն) և մի փոխանդամի (Մ. Աթաբեգեանի փոխարէն) ընտրութիւնը.
4) Ընթացիկ հարցեր։

(կ.) (տ.) 2—2

Ա. Զ. Դ.

ԵՂԲ. ՅԱԿՈԲՋԱՆԵԱՆՆԵՐԻ եւ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

(Նիկոլայեվսկի կամուրջի վրա, ՔԱՄՕՑԵՎԻ տանը № № 25—30)

Պատիւ ունի յայտնելու յարգելի գնորդներին, որ, ի նկատի ունենալով Մոսկվայի իր սեփական ֆաբրիկայում պատրաստված ՄԵԾԱՔԱՆԱԿ ԱՊՐԱՆՔԸ՝ ՄՕՏ 100,000 ՌՈՒԲԼՈՒ ԱՐԺՈՂ.—տղամարդկանց, կանանց, երեխաների և բոլոր հիմնարկութիւնների պաշտօնական ՊԱՏՐԱՍՏԻ ԶԳԵՍՏՆԵՐ, և նոյնպէս՝ ի նկատի ունենալով ընդհանրապէս առևտրի կանգ առնելը, ԳԼԽԱՒՈՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ կարգադրութեամբ

Դեկտեմբերի 1-ից ս. թ. նշանակված է

խանութում գտնվող բոլոր ապրանքների համար—ձմերային և ամառային սեզոնի

ՄԻՆՉԵՒ ՕՐՍ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՉԵՂԱԾ

ՄԵԾ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ

(29, 2, 7, 11, 14, 17, 21, 23, 24 դ. 4 յուն.) տռ. 10—1

ԴԵՐԲԵՆՏՈՒՄ, քաղաքի կենտրոնում վաճառվում է **ԵՐԿՅԱՐԿԱՆԻ ՄԻ ՏՈՒՆ**՝ նկուղով, 360 քառ. սաժէն տարածութիւն ունեցող հողի վրա, երեք կողմից խիտ անցուդարձ ունեցող փողոցներով։

Նոյնպէս վաճառվում է քաղաքից հինգ վերստ հեռաւորութեան վրա գտնվող ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻ, հերթական բաժին ունեցող ջրով, ութ դեսեատին տարածութեամբ, քարաշէն երկյարկանի տնով և ջրհորով։

Այդ կալուածքները պատկանում են հանգուցեալ Եկատերինա Մելիք-Շահնազարեան դէ-Շապուրին։

Գնել ցանկացողները կարող են դիմել կտակակատարներին Դերբենդում—Կարապետ Ա. Օրբելովին և Յովհաննէս Գ. Իսաղուլեանցին։

(կ.) 9—5

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Աւագների Խորհուրդը յայտնում է ի գիտութիւն պ. պ. անդամների և կանդիդատների, որ առաջիկայ 1909 թ. համար տոմսակները նորոգելու ժամանակը լրանում է դեկտեմբերի 15-ին 1908 թ. և այդ ժամանակը լրանալուց յետոյ Աւագների Խորհուրդը կը վարվէ համաձայն Ժողովարանի կանոնադրութեան § 15-ի։

(կ.) (տ.) 2—2

Շաբաթ դեկտեմբերի 6-ին

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

կայանալու է

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿ. ՕԳՏԻՆ

ՀԱՄԵՐԳ ԵՒ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

I

Համերգին կը մասնակցեն. յայտնի երգչուհիներ, երգիչներ և երաժիշտներ։ Սիրողների խումբը հայր Կոմիտասի և պ. Մանուկեանի ղեկավարութեամբ։ Բալալայկա ածողների խումբը։

II

Վիճակախաղ թանգագին իրերով, «petits-chevaux», նոր պարեր և կոտիլիոն։

III

Երաժշտութիւն եւրոպական և ասիական։

Սկիզբն է ժամը $8^1/_2$-ին

Մուտքի տոմսակների գինն է 2 ր. 20 կ.

Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ ընկ. գրասենեակում՝ Արաս-Աբաջանիլ հրապարակ, № 7, սեփ. տ.։ Նոյն գրասենեակում շնորհակալութեամբ ընդունվում են նուէրներ վիճակախաղի համար։

(շ. ե. ու.) (տռ.) 4—1

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

ԱՐՏԻՍՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

ՀԱՅ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Երկուշաբթի, դեկտեմբերի 1-ին

բարեհաճ մասնակցութեամբ յայտնի հայ բանաստեղծ Արշակ Չօպանեանի, Ջութակահար Դաւթեանի, տ. Իւ. Սպենդիարեանի և օր. Ի. Քալանթարի

կը ներկայացնէ

I

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

դրամա 3 գործ. Շնիցլերի. Թարգմ. Ս. Ա.

Մասնակցում են՝ տ. տ. Արաքս, Մելիքեան, օր. Քալանթար, պ.պ. Զարիֆեան, Մամիկոնեան Սևումեան և Վանչեր։

II

ԴԻՒԵՐՏԻՍՄԷՆՏ

Մասնակցում են՝ օր. Ադամեան, տ. տ. Մայսուրեան, Սպենդիարեան, պ. պ. Դաւթեան, Զարիֆեան, Չօպանեան։

Սկիզբը երեկոյեան ուղիղ ժամը 8-ին։

ԹԻՖԼԻՍԻ

ՀԱՅ ՏՆՏԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

անդամները առաջիկայ կիրակի, ամսիս 30-ին, երեկոյեան ժամը 7-ին, Կովկասի Կայսերական Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում հրաւիրվում են արտակարգ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

որի զբաղման նիւթ լինելու են.

ա. Մի քանի ընթացիկ խնդիրների մասին վարչութեան գործունէութեան վերաբերեալ զեկուցումը.

բ. Ընկերութեան կանոնադրութեան մի քանի կէտերի փոփոխութեան քննութիւնը.

և գ. Ընկերութեան ձեռնարկութեամբ բացված ջուլհակութեան արհեստանոցների գոյութիւնը ապահովեցնելու խնդիրը։

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Մ. Գ. Դաւիթ-Բեկ

Ընդունելութիւնը } Առաւօտեան 10—2 ժ. Երեկոյեան 4—6 ժ.

Հասցէ՝ Ртищевская ул., № 7.

(շ. շ.) տ. 50—28

ԱՐՀԵՍՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՍՊԱՐԷԶՈՒՄ

Վաղը, կիրակի, նոյեմբերի 30-ին, նշանակված է հայ տնայնագործական ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողովը, որը պէտք է զբաղվի ընկերութեան ընթացիկ գործունէութեան վերաբերեալ մի քանի խնդիրների քննութեամբ։

Առաջին տարվայ ընթացքում ընկերութիւնը իր Թիֆլիսի արհեստանոցում պատրաստում էր վարպետներ ջուլհակութեան արհեստի համար։ Իսկ երկրորդ տարվանից անցաւ գիւղական շրջանները և ձեռնարկեց գիւղական արհեստանոցների նախնական ցանցի կազմութեան։

Փորձը տուեց բարեբար հետևանքներ։

Գիւղական ազգաբնակութիւնը համակրութեամբ վերաբերվեց արհեստանոցների բացման և արհեստների ուսուցման։ Եւ ներկայումս շատ տեղերից դիմում են ընկերութեանը կազմակերպելու արհեստի տարածման գործը իրանց շրջաններում։

Այդ գեղեցիկ սկզբնաւորութիւնը, որ ընտելացրեց գիւղական մարդուն նոր արհեստի ներմուծմանը կամ եղած արհեստի կատարելագործութեանը, պէտք է առանձին հոգատարութեամբ խնամվի և պահպանվի, որպէս զի հիասթափութիւն առաջ չը գայ ժողովրդի մէջ և գործը դրվի զարգացման աւելի լայն և ապահով ճանապարհի վրա։

Արհեստանոցների բացման փորձը ցոյց տուեց, որ գիւղական աշխարհը, թէև դանդաղութեամբ է ընդունում նորամուծութիւններ, բայց երբ շօշափելի օրինակներից համոզվում է նոր արհեստի օգտակարութեան մէջ, սկսում է դրական քայլեր անել կուլտուրական առաջադիմութեան ասպարէզում։

Ընկերութեան ընդհանուր ժողովի և առհասարակ նրա անդամների վրա այժմ մի ազնիւ և պատկառելի պարտաւորութիւն է ծանրանում—խրախուսել այդ համակրելի գործը, որ առաջ բերեց նոյնիսկ ինքնագործութեան փորձերը ժողովրդական շրջաններում արհեստագիտութեան տարածման վերաբերութեամբ։

Երբ ներկայ նախնական փորձերը քաջալերված կը լինեն և ջերմ աջակցութեան արժանացած, այն ժամանակ դրանից կը հետևեն նորանոր աւելի համարձակ փորձեր և կընդարձակվի կուլտուրական առաջադիմութեան ծաւալը՝ տարածվելով առանձին կէտերից դէպի շրջակաները։

Ժողովրդական ինքնագործութեան արթնանալը արհեստագիտական ասպարէզում շատ կարևոր և էական մի հանգամանք է, որից պէտք է օգտվել կուլտուրական աւելի խոշոր հետևանքների հասնելու համար։

Ա. Քալանթար

ՊԱՏՐԻԱՐՔ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՆԱԼԸ ՍՈՒԹԼԱՆԻՆ

«Արևելք» լրագիրը հաղորդում է, որ նոյեմբերի 15-ին, շաբաթ օր, նորընտիր պատրիարք Իզմիրլեանը հանդիսաւոր ընդունելութեամբ ներկայացել է սուլթան Աբդիւլ-Համիդին և արտասանել հետևեալ ուղերձը.

«Վեհափառ տէր.

«Պօլսոյ և իր ենթակայ վիճակներու թափուր մնացած հայոց պատրիարքութեան ընտրութիւնը, ըստ կանոնի, ազգ. ընդհ. ժողովոյ կողմէ կատարուելով, սոյն պատրիարքութեան կոչուեցայ, որ վաւերացուեցաւ կայս. իրադէով։ Նաև ձերդ կայս. վեհափառութեան ներկայանալու պատիւը ունենալու մասին շնորհուած կայսերական արտօնութեան համար անկարող եմ շնորհակալութիւն յայտնելու։

«Վեհափառ տէր, մեր օսմանեան նուիրական հայրենիքին յառաջդիմութիւնն ու ապագան ապահովող մեր սահմանադրութեամբ երաշխաւորուած իրաւունքներուն պահպանումին և օսմ. զանազան տարրերուն միջև հաստատուած եղբայրութեան և անկեղծութեան տևականութեան համար ամեն կերպ զոհողութիւն յանձն առնել՝ բովանդակ օսմանցիներուն պարտականութիւնն ըլլալով, այս տեսակէտով իմ անձիս ինկած նուիրական պարտականութիւնը բոլոր ազգիս անհատներուն հետ անձնուիրաբար պիտի ջանամ կատարել, ուստի կատարելապէս վստահ եմ, թէ ձերդ կայս. վեհափառութեան և տէրութեան մինիստրներուն կողմէն հարկ եղած աջակցութիւնը չպիտի զլացուի, և կը փութամ յայտնել, թէ օսմ. մշտական պետութեան համար անձամբ և ազգիս անունով պատրիարքարանի մայր տաճարին մէջ հրապարակաւ ուխտած և երդուընցած հաւատարմութիւնս գործնականապէս և կատարեալ ճշտութեամբ պիտի գործադրեմ։

«Բարձրեալն Աստուած ձերդ վեհափառութեան՝ մեր օսմ. նուիրական հայրենիքին երջանկութեան համար տածած ջանքերը նախախնամական յաջողութիւններով պսակէ, և ձերդ կայս. վեհափառութիւնը օսմ. կայս. գահոյից վրայ անսասան պահէ, ամէն»։

Սուլթանը պատասխանել է հետևեալ կերպով.

«Հայ ազգին կողմէ ձեր պատրիարք ընտրուիլը կը շնորհաւորեմ և վերջին ծայր գոհ եմ ձեր բարեմաղթութիւններէն։

«Շատոնց ի վեր հայ և թիւրք ժողովրդեան միջև անհամաձայնութեան ոգի մը կը տիրէր, ուրկէ ես ինքս չափազանց ազդուած էի. այժմ ինքզինքս բախտաւոր կը զգամ, որ այդ ամենը վերցան, և եղբայրութիւն, արդարութիւն ու հաւասարութիւն կը տիրեն մեր ժողովուրդին ամեն տարրերուն մէջ՝ շնորհիւ սահմանադրութեան, որուն պահպանման համար մեր կողմէն ևս երդում եղած է հրապարակաւ։

«Գոհ եմ որ դուք ալ ուխտեր էք եկեղեցւոյ բեմէն զայն կէտ առ կէտ գործադրելու և ամեն ջանք ի գործ դնելու համար։

«Ես ու մինիստրներս ոչ մէկ օժանդակութիւն չպիտի խնայենք հայոց երջանկութեանը համար. ասոր ապահով կրնաք ըլլալ։

«Բարևներս հաղորդեցէք բովանդակ հայ ժողովրդեան»։

Մանրամասնութիւնները յաջորդ անգամ։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թեհրան, 22 նոյեմբերի

Շահի և զինուորական մինիստր Էմիր-Ջենգի յարաբերութիւնները սաստիկ լարված են։ Վերջինս փաստօրէն պահում է շահին գերութեան մէջ և ամեն կերպ աշխատում է զօրքի համակրութիւնը վաստակել. փողեր է բաժանում, զօրահանդէսներ է սարքում։ Խօսում են, որ Պարսկաստանը գտնվում է քաղաքական խոշոր անցքերի նախօրեակում։

Խորասանի շրջանում խլրտումներ են սկսվել։ Խլրտումներ են սկսված նաև միւս շրջաններում։ Ժողովուրդը իր ձեռքն է առնում իշխանութիւնը և արտաքսում կառավարութեան ներկայացուցիչներին։ Զօրքերը անցնում են սահմանադրականների կողմը և նրանց յանձնում զինանոցները, միաժամանակ կերպով պահանջում են վերականգնել սահմանադրութիւնը։ Ժողովրդական ապստամբութիւնը օղակի նման աւելի ու աւելի է սեղմում Թեհրանը։ Շահի դրութիւնը առանց զօրքի և առանց դրամական միջոցների վհատեցուցիչ է, բայց նա այնուամենայնիւ անհասկանալի յամառութեամբ մերժում է վերադարձնել սահմանադրութիւնը։ («Р. С.»)

Ջուլֆա, 22 նոյեմբերի

Շահի կուսակից Սելիմ-խանի ձիաւորները թալանում են Մարաղան իր շրջակայքով, ուր ռուսահպատակների կալուածներ շատ կան։

Հայ հոգևորականութիւնը դիմել է ռուսական հիւպատոսին իբրև քրիստոնեաների պաշտպանի, խնդրելով թոյլ չը տալ թալանելու։

Թաւրիզում, Սաթթար-խանի ու Բաղըր-խանի ներկայութեամբ, բազմամարդ միտինգ է կայացել։ Ճառախօսները այն միտքն են յայտնել, որ անհրաժեշտ է կռիւը շարունակել, մինչև որ շահը և իր հարստութիւնը գահընկէց լինի։ («Р. С.»)

—

Թաւրիզ, 27 նոյեմբերի

Յեղափոխականները Սէլիմ-խանի առաջաւոր զօրախմբերից նեղվելով երէկ իրանց դիրքից յետ նահանջեցին դէպի Էջերշիրէ և Գօվգիանու։ («Հ. Գ.»)

—

Թաւրիզ, 27 նոյեմբերի

Վասբինջ եկան Թէհրանի կօզակների մի հարիւրեակ, որը սկզբում գտնվում էր Ուրմիայում, և նոյնքան էլ բախտիարցիներ։ («Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 27 նոյեմբերի

Պարլամենտը կը բացվի դեկտեմբերի 4-ին։ («Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 22 նոյեմբերի

Սուլթանի գահաժառանգը և Ենվէր-բէյը ներկայ էին Պերայի թատրօնում «Ազատութեան արշալոյսին» պիէսի ներկայացմանը. աղմկալի օվացիաներ էին անում նրանց։ («Р. С.»)

—

Պարիզ, 22 նոյեմբերի

Այստեղ ստացված տեղեկութիւնների համաձայն, Պօլսում սպանված Իսմայիլ-Մահիր-փաշան սուլթանի մտերիմ անձն էր։ Նրա միջոցով էր սուլթանը գումարներ բաց թողնում սևհարիւրեակայիններ կազմակերպելու համար, և նրա միջոցով էր սուլթանը իր գաղտնի գրագրութիւնները յանձնում։ («Р. С.»)

—

Երզրում, 22 նոյեմբերի

Քիւրդական և պարսկական ցեղերի աւազակային խմբերը, օգուտ քաղելով Պարսկաստանի անիշխանական վիճակից, անարգել կերպով անցնում են սահմանը և թալանում Բայազէտի շրջանում ու Արաքսի տափարակների վրա գտնվող գիւղերը։ («Р. С.»)

—

Կ. Պօլսից հեռագրում են «Каспій» լրագրին, թէ Դիարբէքիրի շրջաններում խմբային անկարգութիւններ են տեղի ունենում։ Քիւրդերը բռնութիւններ են գործ դնում, կողոպտում են գիւղերը։ Կառավարութիւնը արտակարգօրէն զօրքեր է ուղարկել։

—

Տրապիզօն, 22 նոյեմբերի

Ժողովրդական յուզմունքներ են սկսվել, որոնք ուղղված են պարլամենտական ռէակցիօներ-պատգամաւորների դէմ։ Թռուցիկներ են ցրւում, մերկացնելով նրանց գործողութիւնները։ Նրանց առաջարկում են հրաժարվել պատգամաւորական կոչումից։ Ռէակցիօն պատգամաւորներն էլ իրանց կողմից սպառնում են իրանց վնասած գիւղացիներին քաղաք մտցնել։ («Р. С.»)

—

Վիէննա, 27 նոյեմբերի

«Cor. Bureau»-ին հաղորդում են Կ. Պօլսից, որ արտասահմանեան լրագիրներում երևցած այն լուրը, իբր աւստրօ-ունգարական կառավարութիւնը ցանկութիւն է յայտնել բանակցութիւններ սկսել Թիւրքիայի հետ պետական պարտքի վերաբերութեամբ, այստեղ սխալ են համարում։

Կ. Պօլսի ռեդիֆների զօրաբանակը Քօփրիւլի է կանչված չորս շաբաթ շարունակ զինուորական վարժութիւններ կատարելու համար։ («Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 22 նոյեմբերի

Կ. Պօլսում պաշտօնական քայլեր պիտի առնվեն այն նպատակով, որպէս զի պարսից շահի ու իր ընտանիքի համար ապահով հիւրասիրութիւն ստեղծվի Թիւրքիայում, Պարսկաստանում խոշոր բարդութիւններ պատահելու դէպքում։

Լուրեր են պտտում, որ շահը իր թանգագին իրերը արդէն ուղարկել է Եւրոպա։

Պարսից դեսպանութեանը ոչինչ յայտնի չէ։ («Р. С.»)

—

Վիէննա, 27 նոյեմբերի

Պատգամաւորների պալատ։ Ֆինանսների մինիստրութեան կառավարիչը 1909 թ. բիւջէի մասին հետևեալ տեղեկութիւնները տուեց։ Պետական ծախքերը հաշւված են 2,303,593,103 կրօն, եկամուտները՝ 2,303,657,294 կրօն։ Անցեալ տարվայ հետ համեմատած ծախքերը շատացել են 154,700,000 կրօն, եկամուտները շատացել են 154,600,000 կրօնով։ Մինիստրութիւնը վկայում է, որ երկրագործութիւնը, չը նայած մասնակի անբերրիութեան, առաջադիմում է. իսկ արդիւնաբերութեան շատ ճիւղերը փտավում են։ Երկաթուղային, քարածխային և շաքարի արդիւնաբերութիւնը զարգանում է աջողակ պայմաններում։ Պետութեան ֆինանսական պայմանները աջող են, առանձնապէս աւստրօ-ունգարական բանկի դրամական արհեստական շրջանառութիւնների շնորհիւ։ Անհրաժեշտութիւն կայ աւելացնել եկամուտների աղբիւրները։

Զեկուցումը ընդունվեց ծափահարութեամբ։ Պալատը շարունակում է զբաղվել ժամանակաւոր բիւջէի քննութեամբ։ («Հ. Գ.»)

—

Վիէննա, 27 նոյեմբերի

Ռէյխսրատ։ Պատգամաւորների պալատի փոխ-նախագահներ ընտրվեցին Պերներստորֆեր (սօց. դեմօկ.), Շտէյնվենտէր (գերմ. ժող. կուսակ. անդամ), Պօգաչնիկ (սլաւօն), Զազվօրկա (չեխ)։

Կառավարութիւնը պալատին ներկայացրեց 1909 թւի բիւջէն։

(«Հ. Գ.»)

—

Պարիզեան լրագիրները հաղորդում են, որ սերբիական արքայորդին նախազգուշացում է ստացել Պետերբուրգից։ Արքայորդուն, որպէս թէ, ասել են, որ եթէ նա չը փոխէ իր զրգռիչ վերաբերմունքը և չը մեղմէ իր ճառերը, Ռուսաստանը անկարող կը լինի որևէ բան անել Սերբիայի համար։ («Слово»)

Ստօկհօլմ, 27 նոյեմբերի

Տեղի ունեցաւ Նօբէլի մրցանակաբաշխութեան հանդիսաւոր գործողութիւնը՝ Գաբրիէլ Լիպպմանին (Պարիզ) ֆիզիկայի համար, Էրնեստ Ռուտերֆօրտին (Մանչեստէր) քիմիայի համար, Ռուդօլֆ Էյկենին (Ենա) գրականութեան համար, Իլիա Մեչնիկօվին (Պարիզ) և Պաւլ Էրլիխին (Ֆրանկֆուրտ) բժշկականութեան համար։ Խաղաղութեան մրցանակը ստացան Ֆրեդէրիկ Բայէր (Դանիա) և Արնօլդսօն (Շվէդիա)։

Բոլորը, բացի Մեչնիկօվից, ներկայ էին հանդէսին և իրանց մրցանակները և մի-մի ոսկէ մէդալ ստացան թագաւորի ձեռքից։ Մեչնիկօվի ներկայացուցիչը ռուսաց դեսպան բարօն Բուդբերգն էր։

Իւրաքանչիւր մրցանակի գումարը այս տարի կազմում է 192,927 ֆրանկ 24 սանտիմ։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 27 նոյեմբերի

Պետ. Հեռ. Գործակալութիւնը լիազօրութիւն ունի վճռապէս հերքել բերլինեան «Local Anzeiger» լրագրում լոյս տեսած այն տեղեկութիւնը, իբր ռուսաց արտաքին գործերի մինիստրը ռուս քաղաքական գործիչներից մինի հետ խօսակցելիս ասել է, թէ ձևական դաշնակցութիւն Ռուսաստանի և Անգլիայի միջև անհրաժեշտ է շնորհիւ այն դրութեան, որ գրաւել է Գերմանիան բալկանեան հարցում։ Ռուսաց արտաքին գործերի մինիստրը երբէք և ոչ ոքի առաջ այդ մտքով չէ խօսել։ («Հ. Գ.»)

—

Սէվաստօպօլ, 27 նոյեմբերի

Ծովի վերջին ուժեղ փոթորկի ժամանակ խորտակվեց մահմեդական ուխտաւորներ տանող նաւը։ 50 հոգուց ազատվեց միայն մինը։ («Հ. Գ.»)

—

Վլադիվօստօկ, 21 նոյեմբերի

Չինաստանից ստացված լուրերի համաձայն, նոր ռեգենտը լիովին գտնվում է ռէակցիօներների ազդեցութեան ներքոյ, որոնք օգուտ քաղելով մօմենտից իրանց անձնական հաշիւներն են մաքրում անցեալ թագաւորութեան ազդեցիկ գործիչների հետ և ոչ մի բանի առաջ չեն ճնշվում խեղդելու ազատագրական շարժումը։

—

Հաստատվում է այն լուրը, որ չինական կայսրն ու կայսրուհին, նոյնպէս և բարենորոգումների կողմնակից՝ յայտնի լիբերալ գործիչ գեներալ Իւանշիկայը, վախճանվել են բռնի մահով, որը ռէակցիօներների կատարած գործն է։ («Р. С.»)

—

Բեռլին, 27 նոյեմբերի

Ռէյխստագ։ Վիճաբանութիւններ բիւջէտի առիթով։ Ժողովրդական կուսակցութեան անդամ Հաուսմանի կարծիքով, վտանգաւոր է երևում Բիւլօվի խորհուրդը աւելի մեծ չափով օգտվել արտասահմանեան մամուլից։ Բալկանեան հարցի մասին Հաուսման ասաց, որ խօսքը Բեռլինում կապված դաշնագրի մասին է, որ խախտել է կողմերից մէկը։ Դա լուրջ փաստ է, իսկ դրա մասին խօսող Բիւլօվի լեզուն սաստիկ թեթևամիտ է։ Գերմանիան պարտաւոր է հսկել, որ իր երաշխաւորած դաշնագիրը իր զօրութիւնը չը կորցնէ։ Վերջին ճառերից իտալական պատգամաւորների ժողովում երևում է յայտնի անջատումն երեքպետեան դաշնակցութիւնից. ի նկատի ունենալով այդ, անհրաժեշտ է, որ Գերմանիան աշխատէ մի այլ կօմբինացիա սարքել։ Ապա խօսեց Բիւլօվ։ Շօշափելով զինաթափութեան հարցը, նա յայտնեց, որ զինաթափութեան մասին ոչ ոք առաջարկութիւններ չէ արել Գերմանիային։ Ուրիշ պետութիւնների նման՝ Գերմանիան միշտ խիստ ցանկալի է համարել զինուորութիւնների ընդհանուր կրճատումը։ «Մեր դժբաղդութիւնը,—ասաց Բիւլօվ,— բացատրվում է այդ տեսակ նախագծերի գործնական իրագործման հնարաւորութեան կասկածներով։ Գերմանիան ռազմագիտական տեսակէտից ամենաաննպաստ պայմանների մէջ է գտնվում։ Չէ կարելի ասել, որ գործերի դրութիւնը Եւրոպայում առանձնապէս նպաստաւոր չէ երևում։ Անկասկած աւելի ևս լուրջ վտանգ կը ծագէր խաղաղութեան համար այն վայրկեանում, երբ Գերմանիան սկսէր կրճատել զինուորութիւնները։ Պատգամաւոր Հաուսման մի քանի տեսակէտներով պախարակում էր Աւստրօ-Ունգարիայի գործունէութեան եղանակը, բայց երկար ժամանակաշրջանում մեր հաւատարիմ դաշնակիցն էր և չը պէտք է բարդացնել նրա դրութիւնը անպատեհ քննադատութեամբ» (բացագանչութիւններ աջակողմից՝ «կատարելապէս ճիշտ է»)։ Բիւլօվից յետոյ խօսեց ֆօն-Շէն, շօշափելով արտաքին քաղաքականութեան մի քանի հարցեր և հաղորդելով, որ մօտ ապագայում ռէյխստագի անդամներին կը բաժանվի սպիտակ գիրք մարօկկեան հարցի վերաբերմամբ, և ապա յայտնեց, որ ինքը ըստ կարողութեան կանցկացնէ արտաքին գործերի ատեանի ռէֆօրմը, համապատասխան ժամանակակից պահանջներին։ («Հ. Գ.»)

—

Բեռլին, 27 նոյեմբերի

Վօլֆի գործակալութիւնը հրատարակեց Զմիւռնիայից ուղարկված մի հեռագիր, որով հաղորդվում է, թէ, Աւստրիայի դէմ յայտարարված բօյկօտի պատճառով, վերջին օրերս ուրիշ երկիրներից աւստրիական նաւերով բերված ապրանքները չեն դատարկվում։ Այդ պատճառով էլ Գերմանիայի շահագրգռված անձանց խորհուրդ է տրվում այլևս ապրանքներ չուղարկել Զմիւռնիա Տրիէստի վրայով կամ առհասարակ աւստրիական նաւերով, մինչև որ դրութիւնը չը փոխվի։ («Հ. Գ.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

(Սեփ. թղթ.)

Վարդաշէն, 25 նոյեմբերի

Անցեալ ամսում մի ոմն Աղիլխան անունով սարաժնիկ է սպանվում Վարդաշէնում։ Այդ սպանութիւնը հետևանք էր, ինչպէս ասում են, աւազակապետ հայ Բախիշի ոչնչանալուն իր խմբով։ Բախիշի ազգականները (Եաղուբլու գիւղացի) իբր թէ վրէժխնդիր են եղել։ Իսկ միւս վարիանտն էլ գալիս է ապացուցելու այդ Աղիլխանի սև անցեալը, որ դա եկել է առաջ աւազակ, սպանել է իր ցեղակիցներին և որով առաջ բերել թուրքական վրէժխնդրութեան բովը։ Ապա նա իր փրկութիւնը սկսել է որոնել պետական ծառայութեան մէջ, սակայն հետևանքը սպասածին հակառակ։

Եւ տեղական կառավարիչների աչքում կենդանանում է հին ուրուականը, տեղական թուրք պրիստաւի և թուրք դատաւորի կարգադրութեամբ առաջ է եկել գիւղում մի սարսափելի դրութիւն, որ հայերը այլևս գիւղից դուրս ելնել չեն կարողանում, մինչև այն աստիճան, որ չալթուկները մնում են ձիւնի տակ, չեն կարողանում երկիւղից հնձել ու կալսել, որովհետև այդ գիւղի չորս բոլորը թուրքական գիւղեր են, մի ժամանակ ուտիացիներ, իսկ Շաքու խաների ժամանակից ուժով իսլամացածներ։ Նախ ու յաջորդին են դիմում՝ իբր Աղիլխանին սպանել են դաշնակցականները, և յաջորդին յորդորում, որ նա իր ազդեցութիւնը տարածէ այդ յեղափոխական հայերի վրա, հակառակ դէպքում թուրքերը կարող են վրէժխնդիր լինել հայերից։ Եւ այդպիսի ենթադրութեան հետևանքը եղաւ այն, որ Վարդաշէն գիւղի ականաւորներից սկսել են նրանց սպանվել։ Առաջին զոհը եղաւ գիւղի գիւղական դատաւոր Մելիք Խէնայգեանը, որը սպանվեց թիւրքական Փաղաւ գիւղի տօնավաճառում օրը կէսօրին. մի մարդ, որ մի մրջիւնի անգամ իր կեանքում վնաս չէ տուել։ Այդ բաւական չէ, գիւղը ենթարկվել է 25-ական րուբլի տուգանքի, և նոյնիսկ ասում են, որ կօզակներով էկզեկուցիա պիտի նշանակվի։

Այժմ տրամաբանական մի հարց է առաջ գալիս։ Միթէ տեղական կառավարութիւնը մի Աղիլխանի սպանութեան պատճառով, որը իր սև անցեալով արդէն յայտնի է, ինչպէս գիւղացիներն են պնդում, գիւղը պիտի հասցնէ այդ դրութեան։

Մթնոլորտը ծանր է։ Թուրքերը պարզօրէն կոտորածներից են խօսում։ Ուստի յանուն արդարութեան, կառավարութեան ու տեղական առաջաւորների լուրջ ուշադրութիւնն ենք հրաւիրում այդ եղբայրասպան դաշտի նկատմամբ. իսկ այստեղի պաշտօնեաները, ցանկալի է, որ փոխարինվէին անաչառ ռուս մարդկանցով, որ վաղօրօք բարդութիւնների առաջն առնվէր։

Սիլա

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Հեռագրով)

Պետերբուրգ, 26 նոյեմբերի

Քննութեան խնդիրը 20-դ նիստում ֆինանսական մասնաժողովի զեկուցումն է պօրտօ-ֆրանկօն փակելու և Պրիամուրի գեներալ-նահանգապետութիւնն ու Անդրբայկալեան շրջանը արտասահմանեան ապրանքներ բերել տալու մասին։

Այդ հրատապ խնդրի առիթով շատերն են խօսում, թէ ձախակողմեաններից, և թէ աջակողմեաններից. առաջինները դէմ են փակելուն, երկրորդները, ընդհակառակն, կողմնակից են։

Վերջում քուէարկութեամբ, կադէտների և ձախակողմեանների ձայների հակառակ, Դուման որոշում է անցնել կառավարութեան օրինագծի յօդուածային քննութեան։

Առաջին յօդուածային ընթերցումը վերջանում է։

Նախագահը կարդում է հերթական գործերի օրակարգը, որի մէջ, ի միջի այլոց, երկու յայտարարութիւններ կան այն մասին, որ պէտք է հարցապնդում ուղղել ներքին գործերի մինիստրին՝ թէ ինչու է վերացրել

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Կաթող. ընտր. օրերից)

II*)

Կաթողիկոսական ընտրութեան սկիզբն այն օրն է, երբ աշխարհական պատգամաւորները տաճարում, Իջման սեղանի առաջ, պատարագից յետոյ, որ մատուցանում է տեղապահը, երդումն են ուտում՝ խղճի մտօք կատարել ընտրութիւնը, չանսալով ոչ մի կողմնակի թելադրութեան։

Այս անգամ հոկտեմբերի 30-ին, հինգշաբթի, կատարվեց այդ սովորական արարողութիւնը։

Ես, ի հարկէ, մարգարէական տաղանդ չունեմ կամ, անկարող լինելով թափանցել մարդկանց սրտի խորքերը, չեմ կարող ասել, թէ աշխարհական պատգամաւորներից որոնք անսացին միայն իրանց սրտի, մտքի և խղճի թելադրութեանը, որոնք խղճի խայթ զգացին և կը զգան դեռ այսուհետև ուխտին և երդմանը դրժած լինելու համար, բայց կարելի է գրեթէ անսխալօրէն ասել, որ Իզմիրլեանի վերաբերմամբ բոլոր պատգամաւորների խիղճը մաքուր էր։ Խղճի խայթ կը զգան, հաւանօրէն, թէ աշխարհական և թէ եկեղեցական պատգամաւորներից շատերը, որոնք երկրորդ թեկնածուի վերաբերմամբ ստիպված էին այլ կերպ գործել, քան թելադրում էր իրանց համոզմունքը և սիրտը...։

Բայց թողնենք այդ հարցը։

Փրկչական 1908 թուականի հոկտեմբեր 30-ի օրը նշանաւոր եղաւ ոչ թէ պատգամաւորների սովորական երդմամբ, այլ և մի այլ դէպքով, ըստ իս՝ պատմական դէպքով, և այդ պատմական դէպքը կատարվեց հէնց այն սեղանատան կամարների տակ, ուր 3 տարի առաջ կատարվեց մի այլ պատմական դէպք, բոլորովին հակառակ այժմեանին։

Երկու տարի առաջ իրանց հայ ազգի փրկիչ համարողները այդ սեղանատան մէջ ոտքընդոստ յայտարարում էին, թէ եկել են կործանելու, ապականելու Էջմիածինը և հայ եկեղեցին և նրա՝ հայ եկեղեցու աւերակների վրա կառուցանելու հայ ժողովրդի բարօրութիւնը։ Ճիշտ է, բոլոր դաշնակցականները համամիտ և համբերաշխ չէին այն ծայրայեղ ֆանատիկոսների հետ, որոնք, ծանօթ չը լինելով հայ ազգի ոչ պատմութեան, ոչ քաղաքական պայմանների, ոչ ժողովրդի հոգեբանութեան, նրա կրած դարաւոր տառապանքների և տանջանքների հետ, սնված լոկ չը մարսված թէօրէտիկ ծայրայեղ վարդապետութիւններով, Էջմիածնում ևս կամենում էին փայլել իրանց ծայրայեղութեամբ, բայց իրանց անհամաձայն ցոյց տուող այդ դաշնակցականները իրանց այդ անհամբերաշխութիւնը ծայրայեղների հետ չէին արտայայտում որևէ բողոքով, տըրտունջով, որևէ հակա-յայտարարութեամբ, այլ լուռ էին մնում։ Այդ ծայրայեղներից մի քանիսը շուտով անջատվեցին և դարձան անջատականներ, բայց մի քանիսը դեռ շարունակում են մնալ և գործել կուսակցութեան մէջ, և նրանցից մինը, ճեմարանի սան, որ ժողովի մէջ յայտարարեց, թէ «նողկանք և զարշանք է զգում ամեն անգամ կրօնի և հայ եկեղեցու անունը լսելիս», այսօր տիրախնամ Վան քաղաքի հայերի կողմից առաջարկվում է իբրև կանդիդատ պատգամաւորի օսմանեան խորհրդարանի...։ Եւ Վանի խեղճ ու միամիտ ժողովուրդը վստահ է, թէ այդ կանդիդատը կարող է պաշտպանել օսմանեան պարլամենտում հայ ազգի և եկեղեցու շահերը...։

Սակայն այդ ֆանատիկոս ծայրայեղների և նրանց լռելեայն համակրողների դէմ կռւում էր այդ ժողովում մի փոքրաթիւ, բայց իր գիտակցութեամբ լաւագոյն և արդարագոյն՝ ժողովրդական դատի պաշտպանութեան վեհ գաղափարով կռւող մի խումբ, բաղկացած 7—8 հոգուց, որ թուլացնում, չէզոքացնում էր «Թայֆայականների» մոլութիւնները, արշաւանքը և դրա համար էլ հռչակվեց նրանցից «մատնիչ, դաւաճան և դոնօսչիկ» տիտղոսներով։ Ռուսաստանի բովանդակ հայ ժողովրդի գիտակից և հասկացող տարրերի համակրութիւնն այդ բողոքող խմբի կողմն էր։

Տէրունի կաթողիկոս Խրիմեանը, որ իր զառամութեան ու հիւանդութեան պատճառով խաղալիք էր դարձել մի-երկու սևահոգի «Թայֆայական» վարդապետների ձեռքում, անզօր և հառաչագին դիտում էր իր անկողնից ծայրայեղների՝ այդ արշաւանքը, յաճախ լաց էր լինում, յորդորում խոհեմութիւն և չափաւորութիւն գործ դնել, բայց զուր...։ Եւ քաջութիւն չունենալով ինքը դիմադրել գրոհին, նա դիմեց մի այլ միջոցի՝ փակել տալու ժողովը... (պատմութեան մի էջի վրայից այս քողն ևս քիչ-քիչ բարձվում է)։ Ժողովը փակվեց։ «Թայֆայականները» անմիջապէս ցրվեցին՝ հէնց որ մի ոստիկան թուղթը ձեռքին երևաց։ Բայց նրանք իրանց վրէժը կամեցան լուծել նրանով, որ սկսեցին իրանց օրգանների մէջ դրպարտութիւններ, քսութիւններ սերմանել, թէ ժողովը փակվեց բողոքող խմբի և Էջմիածնի միաբանների մատնութեան շնորհիւ...։

Եւ նորից «մատնիչ», «դաւաճան», «դօնօսչիկ» խօսքերը շրջան արեցին միաբանների և բողոքող խմբի հասցէին։ Այդ խմբի մէջ, ինչպէս գիտենք, գտնվում էր և Ղազախ գաւառի պատգամաւոր պ. Սամսոն Յարութիւնեանը, որ հզօր բողոքով ընդդիմադիր հանդիսացաւ, որի ընտրութիւնը դաշնակցականները աշխատեցին խափանել և բեկանել տալ։

Այդպէս էր պատկերը 2 տարի առաջ։

Այսօր, 2 տարի յետոյ, պատկերը բոլորովին այլ էր, թէև գործողների մեծ մասը նոյն անձինքն էին։

Նոյն սեղանատանը նստած էին սեղանի շուրջը դարձեալ մեծ թւով դաշնակցականներ, այս անգամ Թիւրքիայից եկած իբրև կաթողիկոսական պատգամաւորներ. կային և տեղականներ։ Այդ թիւրքահայ դաշնակցականների մէջ աչքի էր ընկնում ոմն Միհրդատ Հայկազն էֆէնդի, որ աջ ու ձախ պարծենում էր իր դաշնակցականութեամբ և Կ. Պօլիս գնալու ցանկութիւն յայտնողներին անդադար կրկնում էր. «Դուն գործ չունիս. հէնց որ Պօլիս եկար, հարցուր Ղալաթիա, հոն հարցուր դաշնակցական կօմիտէի պետ Հայկազն էֆէնդին, և շիփ-շիտակ ինձ մօտ կը բերեն քեզ»։

Եւ զարմանալի բան. այդ դաշնակցականները, իբրև ամենաթունդ նացիօնալիստ-շովինիստներ, երգում էին շարունակ «Էջմիածին ի հօրէ» շարականը։

Նոյն սեղանատանը նստած էին և 2 տարի առաջ բողոքող խմբի անդամներից մի քանիսը, որոնց թւում և Ղազախի նախկին պատգամաւորը։

Այսօր, նոյեմ. 30-ին, սեղանատան ճաշը պաշտօնական էր և նախագահում էր տեղապահ սրբազանը։ Պատգամաւորներից մին՝ Ղարաբաղի թեմի պատգամաւոր Հ. Առաքելեանը, թոյլտուութիւն ստանալով տեղապահից, բաժակ առաջարկեց ռուսահայերի կողմից Թիւրքիայի հայոց բարգաւաճման և առաջադիմութեան համար յանձին ազգային երեսփոխանական ժողովի ատենապետ Մինաս Չերազի և թիւրքահայ եկեղեցականութեան ներկայացուցիչ Յակոբ-Աշոտ եպիսկոպոսի։ Բուռն ծափահարութիւններով ընդունված այս կենացին ի պատասխան, Մինաս Չերազ յանուն և ի կողմանէ թիւրքահայոց, յանուն ազգային երեսփոխանական ժողովի, բաժակ բարձրացնելով ռուսահայերի և Էջմիածնի բարօրութեան համար, արտասանեց մի ճառ, որ ունի պատմական կարևոր նշանակութիւն, ի նկատի ունենալով որ արտասանողը ոչ թէ մի սովորական անհատ էր, այլ ներկայացուցիչ Թիւրքիայի հայութեան, մի ճառ, որ ահագին խլրտում առաջ բերեց դաշնակցականների շարքերում, մի ճառ, որ ամբողջովին դատապարտութիւն էր 1906 թւի կենտրոնական ժողովի գործունէութեան, արդարացումն բողոքի փոքրաթիւ դիմադիր խմբի, ուրեմն դատապարտութիւն յիշեալ գործունէութեան յանուն Թիւրքիայի բովանդակ հայ ժողովրդի։

«Դեռ Էջմիածին չը ժամանած,—ասաց Մինաս Չերազ,—մեզ շատ մռայլ և տխուր գոյներով էին նկարագրել Մայր-Աթոռը, որի հետ կապված է բովանդակ հայութեան սիրտը։ Մենք շատ կը ցաւէինք. կը ցաւէինք մանաւանդ, որ մի երկու տարի առաջ այստեղ եկել են մարդիկ և իբրև ներկայահրէաների մշտական բնակութեանը վերաբերող կանոնները։

---

*) Տես «Մշակ» № 259.

Ցուցակագրված են խօսելու համար 32 հռետորներ աջակողմեաններից, իսկ 44 հռետորներ գիւղացիների կողմից։

Հարցադրումը յայտարարված է շտապողական։

Վիճաբանութիւնները սկսվում են նախ շտապողականութեան հարցի շուրջը։

Գեգէչկորի. կարծում է, որ այդ հարցադրումը կարելի է քննել միայն իբրև ամենադառն ծիծաղ հրէաների վրա և մեղադրում է ռուսաց կառավարութեանը։

Նախագահը.—Բարի եղէք խօսել սոսկ շտապողական լինելու մասին։

Գեգէչկորի.—Կառավարութեան ապօրինի գործողութիւնների մեղադրանքը, որ հրէաներին ամեն տեսակ հալածանքների ենթարկեց, մենք ոչ այլ՝ բայց եթէ ամենադառն ծիծաղ չենք կարող չը համարել։ Մեզ մնում է ռուս ժողովրդի և Եւրոպայի երես առ երես (ուժեղ աղմուկ աջակողմում) բողոքել այդօրինակ հեգնանքի դէմ և ասել, որ կայ որոշ սահման, որից մարդը չը պէտք է անցնէ՝ եթէ նա այդպիսին մնայ։

Պուրիշկէվիչը տեղից.—Ցիմարութիւն է։

Գեգէչկորին շարունակում է.—Առաջարկում ենք հարցադրումը շտապողական ընդունել այն մտքով, որպէսզի իսկոյն ևեթ քննութեան առնվի նա, և մերժել իբրև ապացոյց այն մարդկանց մարդատեցութեան, որոնք ներկայանում են հարցադրման նախաձեռնողներ (ծափ. ձախակողմում, ուժեղ աղմուկ աջակողմում)։

Իշխան Տէնիշէվ.—Հարցադրումը մտցրված է այսօր, 1908 թ. նոյեմբերի 26-ին, մինչդեռ այն ապօրինի գործողութիւնը, որի վրա յենվում են հարցապընդման հեղինակները, կատարվել է 1908 թ. յունիսի 2-ին հրատարակված հրահանգի շնորհիւ։ Երրորդ Դուման գումարվեց 1907 թ. նոյեմբերի 1-ին, իսկ հարցադրման հեղինակները թողել են մի ամբողջ տարի և 26 օր և իրանք իրանց գործողութիւններով ապացուցեցին, որ հարցը շտապողական չէ։ Սակայն, բացի դրանից, իրաւաբանական հարց է ծագում—ինչպէ՞ս համաձայնեցնել հրահանգը օրէնքի հետ։

Մարկով 2-դ.—Հէնց այս րոպէիս կենտրոնի ներկայացուցիչը ասաց, որ շտապողականութիւնը պէտք է չընդունել։ Ես զարմացած եմ մնացել նրա արգումենտացիայից։ Եթէ մենք իմանայինք, թէ ինչ է պատահել մի տարի առաջ, սպանութիւն թէ որևէ ուրիշ յանցանք, և իմանայինք միայն այսօր, այդ տրամաբանութեամբ մենք պէտք է այդ սպանութեան դէմ չը կռւենք, որովհետև ժամանակը անց ենք կացրել։ Հերքում եմ այդ մոտիվը և նրան չափազանց թոյլ եմ համարում։ Մեր ռուսական քաղաքները գրաւվում են եւրոպական աշխարհակալութեամբ, այսօր էլ օտարները ճնշում են ռուս արհեստաւորին, արդիւնաբերողին և առեւտրականին։ Չը շօշափելով եւրոպական ազգայնականութեան գնահատման հարցը, կասեմ, որ այդ երևոյթը մեր ռուս ընտրողի և ռուսաց բարիքի համար փաստակար է։ Ուստի այժմ ևեթ պահանջում ենք հարցադրումը հերթական ընդունել, որպէսզի ժամ առաջ այդ յանցանքը դադարի...

Նախագահը.—Ես ձեզ կանգնեցնում եմ, Դումայի անդամ Մարկով։ Երեք անգամ դուք գործածեցիք «կառավարութեան յանցաւոր գրգռումը» դարձուածքը։ Ես երկու անգամ չընդհատեցի, մտածելով թէ դուք կը զգաք ձեր սխալը, բայց դուք յամառութեամբ շեշտում էք այդ դարձուածքը, որ թոյլատրելի չէ Դումայի պատերի մէջ։ Ձեզ նկատողութիւն եմ անում (ծափ. կենտրոնում)։

Մարկով 2-դ.—Այդպէս ուրեմն, շարունակում եմ։

Նախագահ.— Խնդրեմ, բայց առանց որևէ ագիտացիոնական ձևերի, այլապէս ես ստիպված կը լինեմ կանգնեցնել ձեզ վերջնականապէս։

(Կը շարունակվի)

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ

Պօստով, պաշտօնեաների կանանց մի խմբի կողմից ես մի անօնիմ նամակ ստացայ, որով կանայք գանգատվում են իրանց ընտանիքների քայքայման մասին, շնորհիւ այն բանի, որ նրանց ամուսինների շնքին զանազան բարեգործական ներկայացումների և երեկոյթների տոմսակներ են կապում։

Միանգամայն բաժանելով այդ նամակի հեղինակի կարծիքը, որ փող ժողովելու այդօրինակ միջոցը ոչ-բարեգործական անուանէ արժանի, այլ դրամաշորթութիւն է ինքնին, ես, բայց և այնպէս, զուրկ եմ հնարաւորութիւնից պատշաճաւոր միջոցներ ձեռք առնել երեկոյթներ և ներկայացումներ կազմակերպողների վերաբերութեամբ, որովհետև նամակի անօնիմ բնաւորութիւնը վստահութիւն չէ ներշնչում դէպի ինքը։

Տեղին եմ համարում, սակայն, յայտարարել ի գիտութիւն ընդհանուրի, որ այն սահմանը, որ բաժանում է բարեգործական նպատակին ինքնակամ օժանդակելը այն բանից, որ մարդ մի տեսակ կապված, ստիպված է լինում օգնել նոյն բարենըպատակ գործին, ունի առաւելապէս բարոյական բնոյթ. ուստի և նրանք, որոնք կարողութիւն չունեն բարեգործութիւն անելու, չը խլելով իրանց ընտանիքի անհրաժեշտ հացի կտորը, պէտք է արիութիւն ունենան բացէբաց ասել այդ մասին. առանձնապէս ռճիկով ապրող պաշտօնեաներին խորհուրդ եմ տալիս հետևել իմ օրինակին, մերժել բարեգործական փողեր տալ և վերադարձնել իրանց ուղարկած տոմսակները։

Բարեգործական դրամաշորթների առանձին յաճառութեան դէպքերի մասին խնդրում եմ յայտնել ինձ՝ ստորագրելով այդ յայտարարութիւնները լիակատար ազգանուններով և հասցէներով. խոստանում եմ, որ այդ ազգանունները չեն յայտարարվի։

Նահանգապետ ԼՕԶԻՆՍԿԻ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ «Մշակի» հետևեալ համարը, Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների տօնի պատճառով, լոյս կը տեսնի երեքշաբթի, դեկտեմբերի 2-ին։

◆ Երկրաշարժը նոյեմբերի 27-ին առաւօտեան զգացել են նաև Քութայիսում, Օզուրգէթում, Տկվիբուլում։ Վերջին տեղում ստորերկրեայ հարուածներն այն աստիճան ուժեղ են եղել, որ կայարանի շինութիւնը և երկաթուղային ծառայողների կայարանները բաւական մեծ ճեղքուածքներ են ստացել, այնպէս որ նրանց մէջ ապրել երկիւղալի է։ Շտապով Թիֆլիսից խնդրել են մի քանի կահաւորած վագոններ ծառայողներին ժամանակաւորապէս նրանցում տեղաւորելու համար։

◆ Վերջապէս Զուբալովեան ժողովրդական տունը դարձաւ քաղաքի սեփականութիւն։ Ձևական գործողութիւնները կատարվեցին հինգշաբթի, նոյեմբերի 27-ին։ Այդ տան էլեքտրական լուսաւորութիւնը իր վրա ընդունեց Բաժենտիկի ֆիրման, որի հաշւով տարեկան կը ծախսվի 4000 րուբլի։

◆ Թիֆլիսի վարժուհիների ընկերութիւնը երեկոյեան դասընթացքներ է հաստատել դպրոցից դուրս ուսանող օրիորդների համար։

◆ Անդրկովկասում պարտադիր ուսման համար նախկին զեմստվային նախահաշւով պահանջվում էր 154,990 րուբլի. այժմ առաջիկայ եռամեակի համար խնդրված է 340,129 րուբլի։

◆ Հաղորդել էինք, որ ձրի և էժանագին ճաշարանների և թէյատների ընկերութիւնը դիմել էր քաղաքային վարչութեանը և նպաստ խնդրել իր գոյութեան համար։ Սակայն ներկայ քաղաքային վարչութիւնը մերժել է այդ խնդիրքը, պատճառաբանելով միջոցների բացակայութեամբ։

◆ Ակակի Ծերեթելու յոբելեանական կենտրոնական յանձնաժողովը դիմել է տեղական մասնաժողովներին և առաջարկել է դեկտեմբերի 6-ին մէկական պատգամաւոր ուղարկել Թիֆլիս շնորհաւորանքների և ուղերձներ մատուցանելու կարգը մշակելու համար։

◆ Կիրակի, նոյեմբերի 30-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Աւճալեան լսարանում հայ «Դրամատիկ.-Գեղ.» սիրողների խումբը ներկայացնելու է «Լէօ Դարայեան» 1 գ. դրաման, «Դոն-Պիէտրո Կարուզօ» 1 գ. հեղ. Բրակկի, Թարգ. Մարիկի, և «Խէչօյի Թուղը»։

◆ Այսօր, երեկոյեան ժամը 6-ին, կովկասագիտական բարձր դասընթացքներում տեղի կունենայ Ստ. Լիսիցեանի դասախօսութեան շարունակութիւնը խալդերի մասին։ Դասախօսութեան ժամանակ ցոյց կը տրվեն լուսապատկերներ։ Նոյեմբերի 27-ին դասընթացքները այցելեցին կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Ն. Ռուդոլֆը, շրջանային տեսուչ Լ. Լօպատինսկին և լսեցին Ա. Դիրրի դասախօսութիւնը կովկասեան լեզուների մասին։

◆ Թիֆլիս է եկել աւստրո-ունգարական հիւպատոսը։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը 1909 թ-ի նախահաշւի մէջ մուծել է 160,000 րուբլի Մուխրանեան կամուրջի համար, որի աշխատանքները, ի դէպ է ասել, արագութեամբ առաջ են գնում։

◆ Քաղաքային վարչութիւնը, հետևելով իր որոշման, հետամուտ է ծառայողների ցանկը պակասեցնելուն։ Նա շինարարական մասի ծառայողներին տեղափոխում է միւս բաժինները, իսկ այդ մասը մտադիր է փակել։

◆ Քաղաքային վարչութեան նկատողութեան համաձայն, Թիֆլիսի էլեքտրաքարշի ընկերութիւնը պատուիրել է Վերայի և Վօրոնցօվեան կամուրջների վրա վագոնները դանդաղ քշել։

◆ Երկուշաբթի, Թիֆլիսի քաղաքային դումայի քննութեան խնդիր ծառայելու է 1909 թ. ելևմտի նախահաշիւը։

◆ Կիրակի, ամսիս 30-ին, առաւօտեան ժամը 12-ին, նշանակված է Ջգրաշէնի ս. Աւետեաց եկեղեցու ծխական ժողով, որը լինելու է շարունակութիւն անցեալ ծխական ժողովի։

◆ Երէկ, էկզարխութեան ս. Խաչ եկեղեցու մէջ, էկզարխի պաշտօնակատարը վրաց հոգևորականութեան հետ հոգեհանգիստ կատարեց հանգուցեալ էկզարխ Նիկօն արքեպիսկոպոսի յիշատակին, նրա ծննդեան կէս տարվայ առթիւ։ Հոգեհանգստին ներկայ էին շատ պաշտօնական անձեր։

◆ Ժողովրդական համալսարան։ Կիրակի օրը, Պուշկինեան գրադարանի շէնութեան մէջ (Ալեքսանդրեան այգի), Ա. Իվ. Խատիսեանը կը դասախօսէ ռուսերէն լեզուով «Муниципальное хозяйство гор. Тифлиса». Սկիզբն է ժամը 11-ին ցերեկվայ։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ Ինժեներ-մեխանիկ Տէր-Թադէոսեանին և ուսումնարանական մասնաժողովի նախագահ [illegible] թոյլատրված է նոյեմբերի 30-ին Բագուի հասարակական ժողովարանի դահլիճում պարերեկոյթ տալ Նուխու հայոց ծխական դպրոցների օգտին, թատրոնական և համերգային բաժնով։

◆ «Արամազդ» նաւթարդիւնաբերական ընկերութիւնը խնայողական դրամարկղ է հիմնում իր ծառայողների համար։ Կանոնադրութեան համաձայն, դրամարկղին մասնակցել կարող են միայն այն ծառայողներն ու բանւորները, որոնք մշտական ծառայութեան մէջ են և որոշ ռճիկ են ստանում։ Կանոնադրութիւնը հաստատելու համար արդէն դիմում է արված պատշաճաւոր իշխանութեան։

◆ Զաքաթալում արհեստանոց ունեցող Սարգիս Բէգ-Նազարեանը յայտնել է ոստիկանութեանը, որ «Որոտան» ֆիրմայի գործադուլաւոր բանւորներից մի քանիսը եկել են իր մօտ և պահանջել դադարեցնել աշխատանքները, հակառակ դէպքում կը հրդեհեն նրա արհեստանոցը և իրան էլ կը սպանեն։ Բանւորներից 5-ը կալանաւորված են։

◆ Բալախանի մասում «Սիւնիք» ընկերութեան նաւթահանքից գողացել են 500 րուբլու արժողութեան պղնձէ իրեր։ Կատարված քննութիւնը պարզել է, որ գողութիւնը կատարված է ընկեր. երեք բանւորների մասնակցութեամբ։ Առայժմ գտել են 90 րուբլու իրեր միայն։ Բանւորները կալանաւորված են։

◆ Բագուի լրագիրների խմբագրութիւնները հեռագիր են ուղարկել «Одесск. Нов.»-ի լրագրի խմբագիր Գերցօ-Վինոգրադսկուն, իրանց վրդովմունքը յայտնելով այն բռնութեան դէմ, որին նա ենթարկվել է «սոյիւզնիկ» Գլօբաչևի կողմից։

◆ Բագուի քաղաքային վարչութիւնը որոշել է արգելել իր գրասենեակներում, հաշւապահական մասում, մասնաւոր մարդկանց համար խնդիրքներ գրել և փող ստանալ։ Որևէ տեղեկութիւն ստանալու, վկայականների կամ զանազան թղթերի պատճէնների համար դիւանական տուրքեր չեն առնվում և բոլոր թղթերը քաղաքային վարչութիւնից տրվում են ձրի։ Վարչութիւնը այդ առթիւ յիշեցնում է բոլոր ծառայողներին, որ այդ որոշումը խախտելու մէջ նկատվողները անմիջապէս կարձակվեն քաղաքային ծառայութիւնից։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Օրէնբուրգից հեռագրում են «Нов. Вр.» լրագրին. «Նահանգս աքսորվածների թիւը հասել է մինչև 10,000-ի։ Շատերը թագնվում են։ Ցրտերը ընկնելուն պէս սկսվել են կողոպուտները, սպանութիւններն ու էքսպրօպրիացիաները։ Երեկոները վտանգաւոր է լինում»։

◆ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը ֆինանսների մինիստրի հետ միասին, ռուսական երկաթուղիների շահագործութեան եկամուտը աւելացնելու նպատակով, ինչպէս յայտնի է, յուլիսի 1-ից աւելացրին բոլոր գնացքների ճանապարհորդական տոմսակների գները։ Այժմ, «Часъ Пол.» լրագրի ասելով, փոխանակ օգուտ ստացվելու, անցեալ ամիսները ահագին վնասներ են կրել. օրինակ, Նիկոլաեվսկի երկաթուղու կուրիէրսկի գնացքներից, որոնք բացառապէս բաղկացած են առաջին կարգի վագոններից, այդ ամիսներում գանձարանը ստացել է 3 ամսում 94,000 րուբլի, մինչդեռ ինքը վճարել է 164,430 րուբլի, այնպէս որ վնաս ունեցել է 70,430 րուբլի։

◆ Ֆէօդօսիայի գաւառի Վլադիսլավկա գիւղում երկաթուղային ծառայողներից մէկը, հանդիպելով հարսանիքի, պահանջել է 15 րուբլի «մաղարիչ»։ Վրիժառութիւնից վախենալով, յաջորդ օրը այդ ծառայողը գնում է գիւղը՝ ներողութիւն խնդրելու։ Այնտեղ նրան կապում են և կացինով գըլխատում։ («Б. В.»)

◆ Վօրօնեժի հոգևոր իշխանութիւնը իր գրագիտական դպրոցների ուսուցիչներին վճարում է ամսական 10 րուբլի... Թեմական ուսումնարանական խորհուրդը այդ ողորմելի ուսուցիչներին սովամահութիւնից ազատելու նպատակով վերջերս որոշել է ռճիկները աւելացնել ամսական 2 ր. 50 կոպէկով առաջիկայ նոր տարվանից։ Հասկանալի է, ի հարկէ, թէ ինչպիսի դպրոցներ են այդ դպրոցները, որ և առիթ էր տալիս Դումայի գիւղացի պատգամաւորներին չը թոյլ տալ որևէ գումար յատկացնելու հոգևոր իշխանութեան դպրոցներին։

◆ Մօտ օրերս Նիկոլայեվսկի երկաթուղու Սաբլինօ կայարանում վերջ է տուել իր կեանքին նախկին կօնդուկտոր Ստուկովը. նա կախվել է, որովհետև անկարող էր հաշտվել իր չքաւորութեան հետ։ Ստուկովի այրիկը ծախել է այն պարանը, որով խեղդել է իրան իր հայրը, 50 րուբլով մի ինչ-որ Սայչենկոյի և այդ գումարով հոգացել իր հօր թաղման ծախքը, իսկ Սայչենկօն մաս-մաս անելով վաճառել է այդ պարանը, իբրև թալիսման, Պետերբուրգի թղթախաղացներին՝ աշխատելով մօտ 600 րուբլի։ («Бирж. В.»)

◆ Հոգևոր և այլադաւան գործերի դեպարտամենտը յայտարարութիւններ է ստանում հրէաների խմբական մահմեդականութիւն ընդունելու մասին։ Այդ երևոյթը բացատրվում է հետևեալ կերպով. 1) մահմեդականութիւն ընդունելիս չէ պահանջվում հրաժարվել ծնողներից կամ հարազատներից, 2) ամուսնութիւնը մահմեդականի ու հրէուհու միջև չէ արգելված և 3) մահմեդականութիւն ընդունելը դժուարութիւններ չէ հանդիպում։ Որովհետև ռուսաց օրէնքներում կայ մի կէտ, ուր ասված է, որ հրէաներին թոյլատրվում է միայն քրիստոնէական հաւատին անցնել, ուստի դեպարտամենտում հարց է յարուցվում հրէաների մահմեդականութիւն ընդունելը արգելել, բայց, ի նկատի առնելով բարձրագոյն ուկազը կրօնի ազատութեան մասին, նպատակայարմար է գտնվում այդ խնդիրը թողնել Պետական Դումայի տնօրինութեան։ («Б. В.»)

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Երկուշաբթի, դեկտեմբերի 1-ին, Թիֆլիսի արտիստական թատրոնում հայ դերասանական խումբը կը ներկայացնէ Շիլլերի «Ջուարճալիք» պիեսը։

ցուցիչներ նոյն իսկ Թիւրքահայոց յայտարարել, թէ ժամանակ է կործանել, քանդել Էջմիածինը, որին որպէս թէ այլևս պէտք չունի հայ ազգը։ Գոհութիւն Աստուծոյ, որ այժմ մենք այլ դրութիւն և կերպարանք կը տեսնենք. մենք կը տեսնենք մեր աչքով փոխանակ աւերեալ և քայքայեալ մի վանքի, ինչպէս կը նկարագրէին մեզ, մի շէն ու բարեզարդ աթոռ. մենք գտանք այստեղ մի կարող և գիտնական միաբանութիւն, մենք գտանք մի ճեմարան՝ մի հմուտ տեսչի ղեկավարութեամբ։ Այժմ մեզ Թիւրքահայերիս կը մնայ միայն ուրախանալ և յայտարարել ձեզ, որ մենք Թիւրքահայերս ոչ մի առնչութիւն և կապ չունենք, բարոյական ոչ մի շաղկապ այն մարդկանց հետ, որոնք 2 տարի առաջ եկան յայտարարելու այստեղ Էջմիածնի և հայոց եկեղեցու կործանումը. մենք մեր բոլոր սրտով կը դատապարտենք այդօրինակ ազգակործան ջանքերը և կը գանք խոստանալու ձեզ, որ ամեն ջանք կը գնենք բարձրացնելու ամբողջ Թիւրքիոյ մէջ Էջմիածնի համայքը, տարածելու նրա փառքը, նպաստելու նրա բարգաւաճման և ծաղկման։ Ուստի ի պատասխանի պատգամաւոր պ. Հ. Առաքելեանի բարեմաղթութեան՝ ողջունել մեզ Թիւրքիոյ հայերիս, ես, յանուն Թիւրքիոյ հայութեան, բաժակ կը բարձրացնեմ Էջմիածնի բարգաւաճման համար»։

Որոտընդոստ ծափահարութիւններով ընդունվեց այս բաժակը. ծափահարում էին, «բրաւօ, բրաւօ Ջերազ» աղաղակելով գրեթէ բոլոր Թիւրքահայ՝ աշխարհական և եկեղեցական պատգամաւորները և մանաւանդ ահեղ գոռումներով ծափահարում էր Միհրդատ Հայկազն պատգամաւորը, Դաշնակցութեան սիւներից մինը կ. Պոլսում։

Չէին ծափահարում և սաստիկ գունատված, յուզված էին մի քանի պրոֆէսիոնալ «Թայֆայականներ»։ Անտանելի էր մանաւանդ մի քանիսի վիճակը. Աստուած իմ թշնամուն անգամ այդ վիճակի մէջ չը ձգէ։ Իսկապէս, Սամսոն Յարութիւնեանն էլ պէտք է նոյնպէս ծափահարէր Ջերազի խօսքերին, որովհետև սա նոյնն ասաց, նոյնը բողոքեց, ինչ որ ասաց և բողոքեց ինքը իր ժամանակ՝ 2 տարի առաջ. բայց ինչպէս ծափահարել այժմ։

Միհրդատ Հայկազն կատաղի կերպով ծափահարում էր և ամենևին ուշադրութիւն չէր դարձնում ոչ Ահարոնեանի, ոչ Ամիրխանեանի, ոչ Յ. Շահրազի զայրացկոտ ժեստերին՝ լսելու։

Ծիծաղից ես թուլացել էի, դիտելով այդ զաւեշտական տեսարանը, և դիմելով Հայկազնին՝ ասացի.

— Բայց, Միհրդատ էֆէնդի, միթէ չէք զգալ, որ ձերայինների դատապարտութիւնն էք ծափահարում։

— Ինչպէ՞ս, էֆէնդիմ։

— Որովհետև Ջերազի ակնարկած մարդիկը դաշնակցականներն էին։

— Այդ ո՞ր խենթ ու խելառ դաշնակցականն է եղեր, որ առանց յիմար խօսքեր է արտասաներ. դուք կը սխալիք. եթէ եղեր են, խենթեր են եղեր և բացառութիւններ։ Ես էն մեծ դաշնակցականն եմ. առանկ բաներ չեմ մտածեր։

Եւ նորից որոտընդոստ ծափահարութիւններ Ջերազին։

Վերջապէս ծափահարութիւնները բէչ-բէչ դադարում են։

— Փրկիր, Աւետիս, պատասխանիր,—նորից աղերսագին հայցում են Նիկոմիդիայի և Աղթամարի հուչակաւոր պատգամաւորների նայուածքները։ Նրանք այդ րոպէին մոռացել էին, որ թիւրքահայ պատգամաւորներ էին, նրանք մտել էին «Թայֆայականների» դերի մէջ և գուցէ անիծում էին այն րոպէն, երբ տեղապահ Սուրէնեանը «Թայֆայականների» խնդրանօք միջնորդել էր, որ իրանց պատգամաւոր ընտրեն *)։

Վերջապէս, Աւետիսը վճռում է փրկել։

Երբեք նա իր ճարտարախօսութիւնը այնքան ծանր դատի չէր ծառայեցրել, ինչպէս այս անգամ, և բնական է, որ նա յօնքը շինելու տեղ աչքն էլ հանեց, որովհետև խօսում էր իր համոզմունքի դէմ, պաշտպանում էր մի անարդար դատ, միայն «իւրայինների» պատիւը փրկած լինելու համար։ Մի առանձին հերոսութիւն հարկաւոր չէր շիտակօրէն խոստովանելու, թէ 2 տարի առաջ Էջմիածինը և հայոց եկեղեցին կործանելու տենչով բռնկվածները լոկ իրանց անձնական, անհատական կարծիքն էին յայտնում և բնաւ չէին արտայայտում մեծամասնութեան որոշումը։

Նա դիմեց սոփեստութեան. մի կողմից խոստովանեց, ճանաչեց Էջմիածնի և հայոց եկեղեցու կարևոր նշանակութիւնը հայ ժողովրդի մտաւոր, բարոյական և հոգևոր կեանքի մէջ, խոստովանեց անհեթեթութիւնը նրան կործանելու, բայց միւս կողմից էլ ձգտեց արդարացնել «իւրայիններ»ի վարմունքը նրանով, որ ամեն մի ազգ չէ կարող պահպանել իր գոյութիւնը, եթէ փորձեր չէ անում, յօյսեր չէ արտայայտում, և դառնալով Մ. Ջերազին՝ ասաց. «Դուք, պ. Մ. Ջերազ, մի արհամարհէք այդ փորձերը»։ Ստացվեց այն եզրակացութիւնը, որ հայ ազգի գլխին ամեն տեսակ դալլաքութիւն կարելի է փորձել, և վնաս չունի, եթէ դալլաքութիւններ փորձվեն նրա գըլխին։

«Մշակի» խմբագիր Ալ. Քալանթար, խօսք խնդրելով, ցոյց տուեց այդ դալլաքութիւնների վնասակարութիւնը։ Նա ասաց.

«Այն րոպէներին, երբ մենք կանգնած ենք լինում խոշոր պատմական դէպքերի և որոշումների առաջ, մենք պէտք է խորապէս զգանք պատմական պատասխանատուութեան պարտաւորութիւնները։ Այդպիսի րոպէներում կատարված սխալները կարող են ճակատագրական և չափազանց ծանրակշիռ լինել։ Ժողովրդական ոգու գիտակցութիւնը և հասարակական խղճմտանքի ըմբռնումը պէտք է ղեկավար հանդիսանան որոշումներ և գործնական քայլեր անելու ժամանակ։ Եթէ մենք անցեալում աւելի լաւ ըմբռնած լինէինք խոշոր պատմական րոպէների պահանջները, այժմ անշուշտ աւելի լաւ վիճակի մէջ կը լինէինք։ Իւրաքանչիւր սերնդի վրա ծանրացած է իր ժամանակակից կեանքի պահանջների գիտակցութեան պատասխանատուութիւնը։ Սկսած Իսրայէլ Օրիից մինչև մեր օրերը մենք յաճախ մեղանչել ենք պատմական րոպէների պահանջների ճիշտ և հարազատ ըմբռնման դէմ և չարաչար պատժվել։ Եւ անշուշտ, ներկայումս երբ գտնվում ենք պատասխանատու դէպքերի շրջանում, մեծ պահանջ կայ ցանկալու, որ ժողովրդական ոգու և պահանջների արտայայտութիւնը լինէր հարազատ և հեռու ճակատագրական սխալներից»։

Խօսքը վերջացնելով՝ Ա. Քալանթար բաժակ առաջարկեց ժողովրդական գիտակցութեան յաղթանակների համար։

Ինչպէս ասացի, բաւական անախորժ էր Ս. Յարութիւնեանի դրութիւնը։ Այդօր, երեկոյեան, մասնաւոր ժողովում, Նիկոմիդիայի անհեռատես պատգամաւորը նորից փորձանքի ենթարկեց նրան, նորից դրեց անտանելի դրութեան մէջ։ Ամիրխանեան նորից փորձեց Թայֆայականների այն ժանգոտած, մաշված զէնքը, թէ կենտրոնական ժողովը փակվեց շնորհիւ մատնութեան, դօնօսի, իսկ յայտնի է, թէ Թայֆայականները ում էին ակնարկում—Էջմիածնի միաբանութիւնը և բողոքող խումբը, որի մի անդամն էր այն ժամանակ և Ս. Յարութիւնեանը։ Կարապետ վարդապետ, դուրս գալով համբերութիւնից, մի լաւ շշպրեց Ամիրխանեանին, ցոյց տուեց այդ զրպարտութիւնների բոլոր ստորութիւնը և կեղտոտութիւնը։ Ամիրխանեան վեր է կենում և կամենում է պատասխանել. նա չէ նշմարում Ս. Յարութիւնեանի անձկալից և աղերսող նշանները՝ լռել. ախր չէ՞ որ այդ մատնիչներից մինն էլ ինքն էր յայտարարվել Թայֆայականների օրգանում։ Շատ ուշ գլխի է ընկնում անհեռատես Ամիրխանեանը, թէ այժմ նա «իւրայինին» է խփում, և տխուր ու գլխիկոր լռում է։

Նիստից յետոյ, ինչպէս յետոյ պատմեց մեզ Ջերազը, Ահարոնեան, Յարութիւնեան և ընկերները մեծ տժգոհութիւն էին յայտնել նրան, որ նա իր ճառով «մշակականների հացին իւղ էր քսել»։

Անցնենք այժմ մեր միւս տպաւորութիւններին։

(Կը շարունակվի)

---

*) «Բիւզանդիոն» թերթի տուած տեղեկութիւնները պարզում են վերջապէս Յ. Ամիրխանեանի՝ Նիկոմիդիայի պատգամաւոր ընտրվելու գաղտնիքը. նրան ընտրել յանձնարարել է տեղապահ Սուրէնեանը, որ, երևի, հալած իւղի տեղ էր ընդունում «Թայֆայականների խոստումները...»։

Դա մի պիէս է, բաղկացած երեք գործողութիւնից, դեռ չը խաղացված հայկական բեմի վրա։

Դրամայից յետոյ տեղի կունենայ գրական-երաժշտական բաժին, որին կը մասնակցեն պ. Արշակ Զօպանեան, որ հիւր է մեր քաղաքում, ջութակահար Դուլթեան և ուրիշներ։

Դրամայի մէջ կը մասնակցեն օրիորդ Ի. Քալանթար, տիկին Արաքս, պ. պ. Զարիֆեան, Մամիկոնեան, Սևումեան։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(Հեռագրով)

Մենք ստացանք Հին-Ղրիմից հետևեալ հեռագիրը, նոյեմբերի 27-ին, որ տպում ենք վերապահութեամբ, հրաւիրելով Եղիշէ վարդապետին բացատրութիւն տալ։

«Հին-Ղրիմի հայ հասարակութիւնը խորին կերպով վրդովված է սինօդի լռութեամբ և պահանջում է հասարակութեանը վնասակար Մուրադեան վարդապետին հեռացնել, որը ոչնչացրել է վանքի ինվենտարը և եկամուտներից առձեռն գումարները վատնել է առևտրական ձեռնարկութիւնների վրա։ Փաստերը ստուգել է սինօդի ուղարկած քննութիւնը։ Ի նկատի ունենալով այդ՝ հասարակութիւնը պահանջում է վանքապատկան կալուածքները անյապաղ յանձնել բացառապէս ընտրեալ հոգաբարձութեան։ Վաղուց կուտակված վրդովմունքի պատճառը անկոնտրոլ վանահայրերի հակահասարակական գործունէութիւնն է։ Յուզմունքը սպառնալի չափեր է ընդունում։ Անհրաժեշտ է սինօդին անյապաղ կատարել հասարակութեան պահանջը։ Բաւական է ի չարը գործ դնել մի հեռու ընկած համայնքի համբերութիւնը»։

Լիազօրներ՝ Գրիգոր Բենգլեէվ, Մարտիրոս Ուզունբիջեանեան, Յովհաննիսեան, Բաբաղլեօվ։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նորութիւն. պատի պատկերազարդ (70 պատկերով) օրացոյց.

Լոյս տեսաւ և վաճառվում է

Գ. ՍԱՆՈՅԵԱՆԻ հրատարակութեամբ և Յ. Ք. ԽԱԶՎԱՆՔԵԱՆԻ խմբագրած

„ԼՈՅՍ-ԱՐԱՔՍ“

ՊԱՏԻ ԵՒ ԳՐՊԱՆԻ

ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ 1909 ՅԱՒԵԼՈՒԱԾՈՎ.

ՊԱՏԻ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ օրացոյցի տախտակը ներկայացնում է չորրորդ դարի մեր պատմական կեանքից վերցրած մի երևոյթ, այն է՝ Սամուէլ Մամիկոնեանը սպանում է իր դաւաճան և ուրացող մօրը։ Պատկերը նկարել է յայտնի նկարիչ պ. Վ. Սուրէնեանը, իսկ կլիշէն պատրաստել է Պետերբուրգի աչքի ընկնող ֆիրմաներից մէկը—Բերտհօլդ և ընկ.։ Պատկերի ներքին մասը պատկերացնում է Արարատը—Արաքսի հովտով։

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ պատկերազարդ է. այնտեղ կը գտնէք մօտ 70 պատկեր մեր և եւրոպական պաշտօնեաների(?) և գործիչների իրանց համառօտ կենսագրութիւններով, օրինակ Ստեփան Նազարեան, Արծրունի, Աբովեան, Րաֆֆի, Վարժապետեան, Սահակ, Մեսրոպ, Զանշեան և ուրիշներ։ Ծոցի օրացոյցը զարդարված է 20 պատկերով։ Ունի ճոխ յաւելուած։

Գները—պատինը 50 կ., գրպանինը 20 կ.

Գումարով գնողներին զգալի զիջում։ Դիմել՝ Александрополь, типографія К. С. Саноянца.

Մանրամասն բովանդակութիւնը ցանկացողները կարող են ստանալ ձրի։

(օ. մ.) 3—1

ՎՃԱՐԵԼԻ 3500 Ր.

պատահմամբ ծախվում է փոքր լաւ

ՏՈՒՆ

Օրբելիանովսկայա փող. Ալէքսանդ. այգուց) ցած)։ Տունը երկյարկ. յարմարութիւններով, կոյուղիով և ջրով։ Բանկի պարտքը

3600 ր.

Հարցնել Թամամշևի քարվանսարայի առաջի լիմօնադի բուդկայում։ 1—1

ԲԺԻՇԿ

Ա. Ա. ԽԱՆԴԱՄԻՐԵԱՆ

Ներքին եւ ջղային հիւանդութիւններ, առանձնապէս սրտի և թոքերի հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը՝ 11—1 ժ. առաւօտեան, 5—6 ժ. երեկոյեան։

Սօլօլակսկայա փ. № 6. տ. Միրզօյեվի

(օ. մ.) 50—8

ԲԺԻՇԿ

Ա. Մ. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ

Ներքին հիւանդութիւններ

Ընդունելութիւն ամեն օր { 11—12 ժ. առաւ. / 5—6 ժ. երեկ.

Վելիամինովսկայա փող., № 10.

(օ. մ.) 100—22

Norddeutscher Lloyd

(Հիւսիսային-Գերմանական Լլօյդ)

Պօստային և նաւային հաղորդակցութիւն Բրէմէնի և Նիւ-Եօրքի միջև.

ՇԱԲԱԹԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

Հինգ-վեց օրվայ ճանապարհորդութիւն ովկիանոսի վրայով. Բացի դրա

Բրէմէնից—Վալտիմօր
Բրէմէնից—Գալվէստօն
Բրէմէնից—Բրազիլիա
Բրէմէնից—Արգենտինիա
Բրէմէնից—Արևելեան Ասիա՝ Աւստրալիա.

Լլօյդի նաւերի գեղեցիկ կազմը, առաջնակարգ խոհանոցը և ճանապարհորդների հետ խնամքով վերաբերվելը արդէն յայտնի են ամբողջ աշխարհին։

Հրէայ դաւանութեան ճանապարհորդները Հիւսիսային Լլօյդի անդրատլանտեան նաւերում ստանում են ծիսական կերակուր, որ գտնվում է Բրէմէնի ռաբբիի հսկողութեան տակ։ Բացի դրանից հրէայ ճանապարհորդների համար Բրէմէնում կայ յատուկ հիւրանոց (Stadt Warschau) ծիսական կերակրով, սինագոգով և ընթերցարանով։

Բացատրութիւններ տրվում են բոլոր լեզուներով։ Տեղեկութիւններով դիմել հետևեալ հասցէով.

ԳԵՐՄԱՆԻԱ, ԲՐԷՄԷՆ

Հիւսիս-Գերմանական Լլօյդ

(Bremen, Norddeutscher Lloyd) 6—6

ЕДИНСТВ.
ПРЕДСТАВ.
И. ШТРУМФЕЛЬДЪ
ВАРШАВА
ЧАСЫ ПАТЕНТЪ
1ВЫЙ СОРТЪ

Ի՞ՆՉ ԲԱՆ Է ԱՆԿԵՐԸ

Անկէրը—դա այն մեխանիզմն է, որը համարվում է ամենալաւը ժամացոյցների կազմուածքի մէջ։ Հետևաբար գործարանը նախազգուշացնում է այն ամենքին, որոնք կամենում են լաւ ժամացոյց ունենալ, պատուիրել բացառապէս մեր ներկայացուցչին։ Մեր առաջարկած ժամացոյցը սև պողպատից է, մեխանիզմը «ԱՆԿԵՐ», լարելը 36 ժամը մէկ անգամ, առանց բանալիի։ Այդ ժամացոյցը նման է հին ժամանակների խրօնօմետրին, որը ներկայումս էլ գնահատվում է 10 ր.։ Գործարանը հնարաւորութիւն է գտել առաջարկել ամենքին այդ առաջնակարգ և գեղեցիկ ժամացոյցը 2 ր. 75 կոպէկով. 2 հատը—5 ր.։ Ամեն մի ժամացոյցը ապահովված է 6 տարվայ երաշխաւորութեամբ։ Ճանապարհածախսը 1—4 ժամացոյցի համար 40 կ., Սիբիր՝ 75 կ.։ Ուղարկումը վերադիր վճարով և առանց կանխավճարի։ Նորաձև ոսկուց կարճ շղթայ բրելոկով 75 կ. և 1 ր. 50 կ.։ Նոյն տեսակ երկար շղթայ 2 ր. 50 կ. և 3 ր. 50 կ.։ Հասցէագրել՝ Т-во «ЗАРЯ», Варшава.

55238 6—5

(6, 9, 16, 23, 30, 7)

ԲԺԻՇԿ

Ա. Մխիթարեանց

Սիֆիլիս, վեներական, միզատարական և մորթու ցաւեր

Ընդունելութիւն ամեն օր } 12—2 ժ. ցեր. / 5—7 ժ. երեկ.

Սօլօլակ, Բէհբութեան փողոց № 33.

(հ. շ.) 100—28

ԲԺԻՇԿ Ն. Ա. ԵԱՐԱՄԻՇԵԱՆ

Ներքին եւ երեխայոց

Հիւանդութիւնների

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է՝ } առաւօտեան 12—2 ժ. / երեկոյեան 5—7 ժ.

Օլգինսկայա փողոց, № 14.

(շ. ե. հ.) 20—14

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։

Հիւանդների ընդունելութիւնը { 12—1 առաւօտեան / 5—6 երեկոյեան

Միքայէլեան փող., № 36, տ. Ճավճավաձէի։

100—63

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Յ. Մ. ԿԼՕՆՃԵԱՆ

Ընդունում է բերանի և ատամի հիւանդութիւններ ունեցողներին։ Շինում է ոսկու, արծաթեայ, փարփորի և այլ տեսակ պլօմբներ։ Արհեստական ատամներ ոսկու և կաուչուկի վրա։ Կաբինետին կից արհեստական ատամների լաբօրատօրիա։ Խորհուրդը ձրի։

Ընդունելութիւն } 9—2 ժ. առաւօտեան / 4—7 ժ. երեկոյեան

Шелковниковская ул., № 8, ոչ հեռու Արաս-Արագսկայա հրապարակից։

(շ. կ. չ.) 25—9

ՄԱՏԹԷՈՍ

Արքեպիսկ. Իզմիրլեան

Համառօտ կենսագրութիւն պատկերով, կազմեց Տիրվանդաղէ։ Գինն է պօստի ծախքով 20 կոպէկ. կարելի է ուղարկել և պօստի մարկաներ։ Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ», Г. И. Галустяну.

(չ. շ.) 2—2

Ծախվում են

շէնքերի համար զանազան տեսակի փայտեղէն, կաղնու տախտակներ, ձողեր, գերաններ և վառելու փայտ, նշտարի փայտ և այլն զանազան տեսակների։ Գները չափաւոր են։ Великокняжеская ул. 43. Лѣсной складъ Ельчіева.

(կ. հ.) 3—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ

ՏՈՅՑԻ և ՊԱՏԻ

1909 Թ.

„ՇԻՐԱԿ“

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

(Տասնմէկերորդ տարի)

Բոլորովին նոր յաւելուածներով ճոխացրած ու հարստացրած և գունաւոր պատկերներով զարդարած։ Դիրքն ու ծաւալը բոլոր եղած հայ օրացոյցներից մեծ և արտաքինով շքեղ։

ՏՈՅՑԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է վիճակագրութիւն ռուս. եկեղ. և վանական հողերի ու կալուածների։ Մուրհակների օրէնքներ և օրինակներ, չափ և կշիռ, դրամներ։ Դրոշմատուրք, բնակարանի հարկ, վարձատրութիւն նօտարների, դատական պրիստաւների, երդուեալ-հաւատարմատարների։ Փոստ և հեռագիր, պօստային նոր օրէնքներ, խնայողական գանձարաններ։ Զինուորագրական օրէնքներ, նորակոչ զինուորների չափը, անցագրեր և բողոքելու ատեաններ։ Կտակի օրէնքներ, օրինակներ, կեղծ ու անվաւեր կտակներ։ Հարուստ բժշկարան, առողջապահական խորհուրդներ—խմելու ջուրը, մարդկանց երկարակեցութիւնը։ Մարդու ընդունած սնունդը, սննդի նշանակութիւնը, ինչպէս է կատարվում մարսողութիւնը։ Հացահատիկների մշակման նոր ձեր—հացաբոյսերի չիթիլ և նրա օգուտները, մեղուաբուծութեան օգտակարութիւնը, խորհուրդներ մեղուաբոյծներին։ Կառավարութեան ձևեր, ինչ է սահմանադրութիւնը, օսմանեան սահմանադրութիւնը, Թիւրքահայոց սահմանադրութիւնը։ Հիպնոտիզմ, երկրի սկզբնական վիճակը, գիսաւոր աստղեր, մարդու սկզբնական լեզուն, աշխատանք, մահ և հիւանդութիւն, երազ, իշխանութեան ծագումը, մայրական սէր, Թոքախտաւոր հօր կտակը, ծեր մշակի խորհուրդները երիտասարդներին, ամերիկական զօրքը։ Քաղաքավարական բարոյական անհրաժեշտ կանոններ, և չորս թիւղ գիտելիքներ, տնտեսական խորհուրդներ, պտուղների բժշկական նշանակութիւնը, աշխարհիս հրաշալիքները, շահի և սուլթանի ներքին կեանքը, գրքերի թշնամիները և գրադարանի ոչնչացումը, մարդու արժէքը ճորտութեան ժամանակ, մահվան վերջին վայրկեանները։ Կենսագրութիւններ՝ Իզմիրլեան, Շահազիզ, Պռօշեան, Արփիարեան, Դոդոխեան, Մուրացան և Սաթթար-խան (պարսից վերջին յեղափոխականը) իրանց գունաւոր պատկերներով։ Հանելուկներ, ռեբուսներ, զուարճալի վիճակարան։ Երեսների թիւ—300։

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է ընտիր մտքեր, աֆորիզմներ, հարուստ ժամանակագրութիւն և բանաստեղծական փոքրիկ հատուածներ ամեն առաջին երեսի վրա, եկեղ. և ազգային տօների պատմական բացատրութիւններ, զանազան հեթանոսական սովորութիւններ, գիտական նորութիւններ, բնութեան երևոյթների բացատրութիւններ առողջապահական, բժշկական խրատներ, արհեստների վերաբերեալ օգտակար գիտելիքներ, ճապօնացիների, հնդիկների, հաբշների և քրդերի կեանքից զուարճալի պատմութիւններ, պատմական նշանաւոր դէպքեր հայկական, ռուսական և եւրոպական կեանքից, հետաքրքիր թւեր և տեղեկութիւններ, ինչպէս են ծախսվում հասարակական գումարները, զինուորական ուժ և պատերազմական ծախքեր։ Հողը Ռուսաստանում, ում ձեռքին են հողերը։ Ազգային քնար—նորագոյն բանաստեղծութիւններ, աշուղական խաղեր—սիրոյ երգեր, հետաքրքիր տեղեկութիւններ բուսական և կենդանական աշխարհից։ Թռչունների և կենդանիների հետաքրքիր կռիւները, կենսագրութիւններ, զուարճալի դէպքեր մեծ մարդկանց կեանքից։ Ժողովրդական առածներ, երգեր, լեգենդներ, զուարճալի նորավէպներ, տնային տնտեսութեան վերաբերեալ կարևոր խրատներ, խոհարարական խորհուրդներ, հանելուկներ, շուտասելուկներ, վիճակներ և այլ զուարճալի տեղեկութիւններ։

ՏԱԽՏԱԿԸ յայտնի նկարչի գործ է, պատրաստուած լիտոգրաֆիայում 6 գոյնով, ներկայացնում է Թիւրքահայ ժողովրդի առաջ խորտակված բանտի դռները, գահավիժված բռնութեան պահապան վիշապը, ջախջախված հայ ստրկութեան շղթաները և Թիւրքահայ մանուկը ողջունում է հայրենիքի ազատութեան նոր տարին։

Գները՝ պատինը—50 կոպ., ծոցինը—20 կ., գումարով գնողներին զեղչ։

Դիմել՝ Александрополь типографія «Ширакъ», Карапету Апинянъ. Արտասահմանից—Alexandropoj Karapet Apinian (Caucase).

Ալէքսանդրապոլում չը դիմել ուրիշ ոչ մի հասցէով։

(չ. շ.) 8—2

Պահանջեցէք ամեն տեղ „ՕԴՕԲՐԻՆ“

Միայն ՄԻԽԱՅԻԼ ԼԵԲԷԴԵՎԻ

«Этикетъ утвержденъ прав.» մակագրութեամբ.

Այս միջոցը մի քանի օրում բոլորովին ոչնչացնում է [illegible]



Գլխաւոր պահեստատեղը Դեղագործական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում։

(10, 20, 30) 50—28

Սրանով յայտնում եմ ի գիտութիւն յարգելի

ՀԱՅՑՍՎԱՃԱՌՆԵՐԻ,

որ Ստաւրօպօլ քաղաքում բացել եմ հացավաճառատուն։

Գլխաւոր նպատակս է մատակարարել Անդրկովկասեան քաղաքներին ամեն տեսակ հացահատիկ և ալիւր թէ տեղից և թէ շրջակայ կայարաններից։

Ալիւրը պատրաստում եմ սեփական ընտիր ցորենից՝ հետևեալ տեսակների—«կրուպչատկա», «սէյանկա» և «բազմօլ»։

Հետաքրքրվողներին իսկոյն ուղարկում եմ նմուշները՝ միաժամանակ նշանակելով և գները։

Գների զգալի փոփոխութեան ժամանակ կլիէնտներին յայտնվում է հեռագրով։

Խնդրում եմ ի նկատի ունենալ, որ ամեն մի ապրանք ես գնում եմ առաջին ձեռքից, որ այդ հանգամանքը հնարաւորութիւն է տալիս ինձ վաճառել ուրիշներին ամենայնչպէս նորմալ գներով։

Յուսով եմ, որ յարգելի վաճառականները անուշադիր չեն թողնի իմ ֆիրման։

Պատուէրները կը կատարվեն կարելոյն չափ շտապով, ամենայն ճշտութեամբ և բարեխղճօրէն։

Թղթակցութիւնները հայերէն և ռուսերէն լեզուներով։

Յարգանքով Մ. Յ. ՖԱԼԱԿԵԱՆՑ

Հասցէ՝ } Նամակի համար. Ставрополь-губ., М. А. Фалакянцу, почт. ящ. № 48. / Հեռագրի համար. Ставрополь.-губ., Фалакянцу.

(շ.) 50—15

„ՊՐՕՎՕԴՆԻԿ“

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՌԻԳԱՅՈՒՄ

ФАБРИЧ. КЛЕЙМО Т. Р. Ф. З. ПРОВОДНИКЪ РИГА

1888

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ՊԱՀԵՍՏ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Սօլօլակսկայա փող., № 4.

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ

ՌԷԶԻՆԱՊԱՏ ԱՆԹԱՓԱՆՑԻԿ ՎԵՐՆԱԶԳԵՍՏՆԵՐ

Արտասահմանեան նոր ձևի, պատրաստուած անգլիական ամենալաւ կտորներից սկսած մինչև ամենաէժան կտորները.

ՌԷԶԻՆԱՊԱՏ ՊԼԱՇՉՆԵՐ ԵՒ ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ պարոնայք օֆիցերների համար.

ՌԷԶԻՆԱՊԱՏ ԿՏՈՐԵՂԷՆՆԵՐ զանազան կարիքների համար.

ՌԷԶԻՆԻ ՍՊՈՒՆԳՆԵՐ.

ՍԱՆՐԵՐ եղջերեայ ռէզինից

Հատավաճառութիւն աշխարհի ամենալաւ

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ „ՊՐՕՎՕԴՆԻԿ“

(№ 4) 25—4

Электропечатня Н. Г. Аганьянцъ Полицейская. 7.